

Զ Ե Կ Ո Յ Յ

ԳԱՆՈՒՍՏ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ԿԱԿԱՆ Զ Ե Ռ Ն Ա Ր Կ Ն Ե Ր

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Վարչական Խորհուրդը 1964 տարուան ընթացքին հետեւեալ յատկացումներն ու տնտեսական ծախսերը կատարած է հայկական մեծահարկներու:

1.— Պարմ Համուտի դարմանատմ, լիբրանտ. \$ 1,800

Պուրէ Համուտ Թաղամասին մէջ 1923-ին հիմնուած և ներկայիս Պէյրուսի Սէն փողոցի համալսարանին կողմէ մասնակարարուող այս դարմանատմ շուրս սենեակներուն մէջ լիռուցիչներու և զովացուցիչ կազմաններու ղեկավարման համար:

2.— Ամառատ Յզուրքեան հայ կաթնագինի ֆաբրիկա վարժարանին, Պալատ. \$ 28,000

Վարժարանին մանկապարտէզի և նախադրժարանի շէնքերուն յաւելումնական քանակներու կառուցման համար:

3.— Կիլիկեան Ռաիսկոյրաբանին, Հալիպ. \$ 10,000

Վեց նոր դասարաններու և լուսարաններու կառուցման, խաղաղայրի նորոգութեան և դասարաններու կահուցման համար:

4.— Զեռագրաց Մատենադարաններուն՝ Երեւան, Անթիլիաս, Երուսաղէմ, Պալս, Վինսոնի և Վիեննա. \$ 45,000

Վերոյիշեալ կեդրոններու մեծազրաց մատենադարաններուն մանրանկարող գործիչներու աճողշական կազմաններ հայթայթելու համար յատկացում վարչ:

5.— Յառաջացեալ տարիքով հայ մտաւորականներու հանգստեան Տունի մը կառուցման, Մոմմարէմսի, Ֆրանսա. \$ 45,000

Միացեալ Ազգերու Գաղթականաց Փարիզի դրամանակին հետ համագործակցութեամբ Մոմմարէմսի մէջ կառուցանելու համար նոր շէնք մը՝ ուր պիտի կարենան պատասխանիլ յառաջացեալ տարիքով 25 հայ մտաւորականներ: Միացեալ Ազգերու Գաղթականաց դրամանակը պիտի տրամադրէ 45,000 տուրք, իսկ Փարիզի Հայ Աղքատութեամբ Ընկերութենէ՝ որ միեւնոյն ժամանակ պիտի ստանան յանձնակատարի պատասխանատուութիւնը, պիտի մասնակցի մեծահարկին մօտաւորապէս 32,000 տուրքի դուժարով:

6.— Հրատարակչական. \$ 40,000

Ներկայ դուժարը կ'աւելնայ նախկին նոյն նպատակին համար յատկացում վարչին վրայ՝ կարելի դարձնելու համար ազազայ ծրագրերներու իրագործումը:

7.— Միլիթարեան վարժարանին, Հալիպ. \$ 65,000

Յատկայումս՝ վարժարանի նոր շէնքի մը կառուցման համար: Հոգն գլ շինութեան փոխին մէջ մասը պիտի հայթայթէ Միլիթարեան Միտրանութիւնը՝ որուն կը պատկանի վարժարանը:

8.— Օգնութիւն համալսարանին, Անթիլիա. \$ 308,000

308,000 տուրք (Տ 110,000) ուրի յատկացումը կատարուած է Օգնութիւն համալսարանին մէջ Հայագիտական Ամպիոն մը կառուցելու նպատակաւ:

9.— Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոցին, Պալս. \$ 12,000

Յաւելուածական յատկացում Հիւանդանոցին վերաբուժական գործողութեանց յատուկ գործիչներու ամբողջացման ու արդիականացման համար:

10.— Երիտասարդութիւն և Շարժում Հայկական Ընկերակցութեամբ, Մարտի 11. \$ 10,200

Յօժ. մէջ՝ վերոյիշեալ կազմակերպութեան ունեցած երիտասարդական ամառնային զբօժարին մէջ կարգ մը անհրաժեշտ շինութիւններու համար:

11.— Գարեմ Եփփէ Ճեմարանին, Հալէպ. \$ 8,000

Յաւելուածական յատկացում՝ Գարէն Եփփէ Ճեմարանին կից Նոր շէնքի մը կառուցման առիթով, որուն համար Հիմնարկութիւնը արդէն արամագրած է 33,000 տուրք:

12.— Հայկական վարժարաններու ուսուցիչներու համար կազմակերպուած ամառնային դասընթացք Սեւաի մէջ, Ֆրանսա. \$ 10,000

Հիմնարկութեան կողմէ որչէ որչէ յատկացումը կատարուած է հոգալու համար ծախսերը 20 Հայ ուսուցիչներու՝ որոնք 1964-ի ամառը Սեւաի մէջ մասնակցեցան Սեւաի Մանկավարժական Գիտութեանց Միջազգային կիցրոնին հետ համագործակցաբար կազմակերպուած դասընթացքներուն:

13.— Հայկական դպրիվանքներու. \$ 50,000

Նոյն նպատակին համար 1960-ին արամագրուած գումարը ոպտած ըլլալով, ներկայ յատկացումը կ'ըլլայ յառաջիկայ չորս տարիներու ընթացքին, առանց յարանուանական խորութեան 8 Հայ դպրիվանքերու մէջ Աստուածաբանական ուսման հետեւող որոշ թիւով ուսանողներու կրթական ծախսերը հոգալու համար:

14.— Մեհերմէթ-Յեմա երկրորդական վարժարանին, Պոլիս. \$ 25,000

Վարժարանի Նոր շէնքի մը կառուցման՝ և ներկայ շէնքին վրայ կատարուելիք կարգ մը անհրաժեշտ բարեփոխութեանց համար: Այս առթիւ նախատեսուած 48,000 տուրքի ընդհանուր ծախսին 23,000 տուրքը պիտի հոգայ վարժարանին հոգարարութիւնը:

15.— Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին. \$ 10,000

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եղած է այս յատկացումը տարի մը եւս օժանդակելու համար Հայ դպրիվանքներուն՝ որոնք ապաստան գտած են Սրբոց Յակոբեանց գմբէզին ներս:

16.— Սուրբ Գրիգոր վարժարանին, Պոսթըմ, Միացեալ Նահանգներ. \$ 5,000

Պոսթըմի վերայիշեալ Միթթարեան վարժարան — զբօժարին է նպաստ կատարուած է որչէ յատկացումը՝ հորակաւորյալ Արիւնեան շէնքին մէջ գտնուող Մատենադարանին համար գրեթէ զնկու. նպատակով:

17.— Ամառնային զբոժարներու կազմակերպիչ մարմիններուն, Յամաստան. \$ 30,000

Յոնաստանի մէջ Հայ մանուկներու և պատանիներու յատուկ ամառնային զբօժարներու կազմակերպման և անհրաժեշտ պէտքերը պահանջ գնման համար:

18.— Կիլիկիոյ Կաթողիկոսարանին, Ամթիլիսա. \$ 10,000

Ամթիլիսայի գաղթականներին և Կաթողիկոսարանի Պիկֆայայի ամառանոցին մէջ անհրաժեշտ նորոգութիւններու համար:

19.— Ս. Աթուռն Աւտարանական Եկեղեցւոյ Մշակութային Ընկերակցութեամբ, Ֆրանսա. \$ 10,500

Սոյն յատկացումը եղած է վերայիշեալ ընկերակցութեան որպէսզի կարելի ըլլայ դարձնալ մը կառուցումը՝ իրենց ամառնային զբօժարին կից:

20.— Համագլխային Թատերախումբին, Պուրմ Համուտ, Լիբանան. \$ 10,000

Համագլխային թիւութեան Պուրմ Համուտի Թատերասրահին կահաւորման համար:

21.— Սփիւռքի Խոյնական վարժարաններուն. \$ 250,000

Հիմնարկութեան ներկայ յատկացումը կատարուած է 1965/66 և 1966/67 դպրոցական տարեւրեմներուն եւս շարունակելու համար նախորդ տարիներուն գործադրուած ծրագիրը՝ որուն համաձայն Հիմնարկութիւնը կը հոգայ Հայկական վարժարաններու մէջ ուսանող որոշ թիւով չքաւոր աշակերտներու կրթութեան համար:

22.— Թեհրանի Հայոց Թեմական Խորհուրդին. \$ 6,000

- Յատկացում՝ ի նպատակ հայերեն լեզուի զուտագիրքերու շարքի մը հրատարակութեան:
- 23.— Կիլիկիոյ Կաթողիկոսարանին, Անթիլիաս. § 10,000
Կաթողիկոսարանի ժառանգարանին նորոգութեան ու սարքաւորման համար:
- 24.— Թարգմանչաց-Սվանեամ Միացեալ վարժարանին, Պաղատա. § 8,400
Սոյն վարժարանին կէք՝ Գալուստ Կիւլչէնկեան դարձմաստան համար գնուելիք ճէջ
բէյնի կազմածի մը և այլ անհրաժեշտ զորքիքներու ամբողջացման համար կատարուած յա-
ւելումական յատկացում:
- 25.— Ելմիտմի Կաթողիկոսարանին, Ելմիտմի. § 50,000
Ելմիտմի կաթողիկոսարանին ի նպատակ ուրի յատկացումը եղած է հայագիտական
հրատարակութիւններու ժառանգոր ծրագրի մը իրագործման համար:
- 26.— Մշտնոյ Սնուամ Մասնադարանին, Երևան. § 15,000
Արտասահմանէն ժառանգիտական գիրքերու և հրատարակութիւններու հայթայթման
համար:
- 27.— Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային, Երևան. § 15,000
Արտասահմանէն գիտական հրատարակութիւններու հայթայթման համար:
- 28.— Պատմական Յուշարձաններու Պահպանման Հայկական Ընկերութեամ, Երևան- § 20,000
Հիմնարկութեան ուրի յատկացումը պիտի որոճագրուի Հայաստանի մէջ պատմական
կոթողի մը վերանորոգութեան:
- 29.— Համալսարանական կրթաքառակնիք. § 250,000
Համալսարանական կրթաթուղկներու համար յաւելումական նոր այս յատկացումը
կատարուած է որպէսզի կարելի ըլլայ զոհացում տալ 1965/66 տարեշրջանին ներկայացող
արժանաւորագոյն թէկնածուներուն:
- 30.— Լիբանանի Խայկական Ժողովրդական պարախուսմին. § 7,750
Պարախուսմի անդամներուն տարազներուն, յարգարանքին և բեմական զանազան ա-
ւարկաներու հայթայթման համար:
- 31.— Զմմառի վանքին, Լիբանան. § 11,250
Վանքին մեղագիրները, թղթածրարներն ու հեռութիւնները պարունակող նորակառոյց
չէնքին կառուութեան համար:

ԱՄՓՈՓՈՒՄ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ՅԱՐԻ ԿՆՏԱՐՈՒԱԾ ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐՈՒ

Գումար՝ միջև 31 Դեկտեմբեր 1963 կատարուած յատկացումներու	• • • • •	§ 5,642,509
Գումար՝ 1 Յունուար 1964-էն միջև 31 Դեկտեմբեր		
1964 կատարուած յատկացումներու	• • • • •	§ 1,476,909
Ընդհանուր գումար Հիմնարկութեան կողմէ միջև 31		
Դեկտեմբեր 1964 կատարուած յատկացումներու	• • • • •	§ 7,119,409

ԳԱՂՈՒՍ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Լիզպն, 31 Դեկտեմբեր 1964.

